Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը-IXգ /24 սովորող՝ 15տղա,9 աղջիկ/

Դասղեկ-Լ.Մկրտչյան

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում:

Դասիարակությունը կրթության կարևոր բաղադրիչն է :Ժամանակակից դաստիարակության հիմնական խնդիրներն են անհատի մոտ՝

Ա.քաղաքացիական և իրավական պատասխանատվության ձևավորումը

Բ.հոգևոր և մշակութային արժեքների գնահատումը

Գ.նախաձեռնության և ինքնուրույնության զարգացումը

Դ.ապահովել ծնող-երեխա-ուսուցիչ-դասղեկ սերտ կապը:

3.Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը բարդ գործընթաց է, որը բազմաթիվ թելերով սերտորեն կապված է ինչպես երեխային շրջապատող սոցիալական միջավայրի, այնպես էլ դաստիարակության տարբեր ձևերի հետ:Մենք ձգտում ենք այն բանին,որ ուսուցչին և աշակերտների համախմբի հոգևոր ընդհանրությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով: Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է:

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

…Բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկն է հասարակական ապրումների զգացմունքների խումբը: Վերջինիս էությունն արտացոլող

արժեքներից է նաև հայրենասիրությունը: Այն՝ որպես կատեգորիա, արտացոլում է հասարակությունում տիրող, ինչպես նաև ազգային էթնիկական հոգևոր բարոյական մթնոլորտը:

Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու դրա պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է:

Հայրենասիրության իմաստը դրա հոգևոր արժեքայնության մեջ է: Այն որպես վեհ զգացմունք, անփոխարինելի արժեք է, անսպառ աղբյուր:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ազգային դպրոցի ֆիզիկական դաստիարակությունը, որպես ընդհանուր դաստիարակության անբաժանելի մաս, նպատակաուղղված է անձի բազմակողմանի զարգացմանը, ֆիզիկական կատարելագործմանը և կենցաղում առողջ ապրելակերպի հաստատմանը:Ֆիզիկական դաստիարակության նպատակն է առողջ,գեղեցիկ,ուժեղ սերունդ ձևավորելը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ուսումնական աշխատանք: Այն իրականացվում է ամենօրյա կրթական պրոցեսում՝ բոլոր դասաժամերի ընթացքում: Ուսումնական աշխատանքը համարվում է երեխաների աշխատանքային գործունեության տեսակներից ամենաբարդը: Պահանջում է մեծ կամային ջանքեր, երկարատև կենտրոնացում, համբերատարություն, համառություն և նպատակասլացություն: Աշխատանքային դաստիարակությունն անհրաժեշտ է իրականացնել բոլոր դասաժամերին. սովորեցնել աշխատել. այս խնդիրը պետք է լուծել թե՛ լեզվի և գրականության, թե՛ աշխարհագրության և թե պատմության դասերին: Յուրաքանչյուր դաս պետք է կառուցել որպես աշխատանքի ուսուցման դաս՝ ձևավորելով և զարգացնելով ուսումնական աշխատանքի հմտությունները:

3.6 Դպրոց –ընտանիք կապը

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է ,որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի,երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն:Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով:

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուս Շաբ	Ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Ծանոթու-թյուն	Կատարողներ
1	Կազմակերպչական հարցեր,ավագի ընտրություն,հերթապահության սահմանում,պարետի սահմանած կանոնների ծանոթացում:		Դասղեկ և աշակերտներ
2	Դպրոց՝ուսման դարբնոց:		Դասղեկ և
3	Զրուց.« 44-օրյա պատերազմը և անդառնալի հետևանքները»		աշակերտներ
4	Զրույց.«*Մեր երկրի հերոսական անցյալը*»:		Դասղեկ և
5	Ուսուցիչներ խոնարհվում ենք ձեր առջև:Ուսուցչի դերը մեր կյանքում:		աշակերտներ
6	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:		Դասղեկ և
7	Սոց կայքերում զգուշության կանոնների կիրառում:		աշակերտներ
8	Զրույց «Ծխախոտը և բացասական հետևանքները»:		Դասղեկ և
9	Սեր ,կյանք ,բարություն և համերաշխություն,առանց որի կյանքը անիմաստ է:		աշակերտներ
10	Զրույց «Ինչ է ազնվությունը»:		Դասղեկ և
11	Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները		աշակերտներ
12	Ինչպես խուսափել խաբեությունից		Դասղեկ և
13	Զրույց.«Ինչպես պաշտպանվել աղետից»		աշակերտներ
14	Իմ երազանքներն ու նպատակները:		Դասղեկ և
15	Զրույց «Ինչպես կյանքում հաջողության հասնել»		աշակերտներ
16	Ամանորյա ցերեկույթ«Շնորհավոր 2022թ»		Դասղեկ և
17	Զրույց«Ազգային սովորույթներ»:Եկեղեցական տոների օրացույց:		աշակերտներ
18	Զրույց«Մարդ,ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ»		Դասղեկ և
19	«Մայրենիի օր» :Լեզուն մեր զենքն է ,մեր ամուր պատմությունը:		աշակերտներ
20	Զրույց «Ի՞նչ է պատասխանատվության զգացումը»:Լինել առավել պատասխանատու:		Դասղեկ և
21	Զրույց.<Առողջ սնուցումը երկարակեցության գրավականն է>		աշակերտներ
22	Զրույց«Բարոյական արժեքները իմաստավորում են մեր կյանքը»		Դասղեկ և
23	Զրույց«Առողջ մարմնում առողջ ոգի»:Առողջ ապրելակերպի կանոնները և անհրաժեշտությունը:		աշակերտներ

24	Զրույց «Սուրբ հարության տոնը»		Դասղեկ և
25	Բանավեճ «Ասա ո՞վ է ընկերդ ,կասեմ ո՞վ ես դու»		աշակերտներ
26	Զրույց «Հայոց ցեղասպանություն»թեմայով:		Դասղեկ և
27	Զրույց <Ապահով համացանց >թեմայով : Խաղ kahoot և Quiz գործիքների միջոցով		աշակերտներ
28	Վատ սովորությունները և դրանց հետևանքները:		Դասղեկ և
29	Աշխարհն իմ ընկալմամբ: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:		աշակերտներ
30	Զրույց «Ողջ աշխարհը խաղաղություն է ուզում»		Դասղեկ և
31	Զրույց«Հայ ավանդական ընտանք :		աշակերտներ
32	Զրույց«Ուսուցիչ շնորհակալ եմ քեզ»		Դասղեկ և
33	Մայիսի 28՝ Առաջին հանրապետության օր:		աշակերտներ
34	Ավարտական աշխատանքներ		Դասղեկ և աշակերտներ

Դասաարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

Անցկաց.օրը,ամիս, տարին	Անցկացվող միջոցառման բովանդակ.	Ծանո-թություն
	Ծխախոտը և վերջինիս բացասական հետևանքները:	
	Բարոյական արժեքները իմաստավորում են մեր կյանքը: Սեր,ազնվություն,ընկերություն,հարգանք,արդարություն,ինքնատիրապետում,քաջություն:	
	Քչերը գիտեն,շատերը չգիտեն (հետաքրքիր տեղեկություններ)	
	Հայ ավանդական ընտանիք Հայկական ավանդույթների պահպանումը մեր ընտանիքում	

VOSKANYAN HAMLET 2901740030

Digitally signed by VOSKANYAN HAMLET 2901740030
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=111c2c8ac4ea0, cn=VOSKANYAN HAMLET 2901740030
Date: 2023.09.05 17:06:27 +04'00'